



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՄԵՐԻԿԱ

ԻՆՉՈՂԵԱ
ՄՅԱԿԵԼ ՀՈՇԵ,
ՎՈՐ ՃԱՏ ԲԵՐՔ ՏԱ

ՊԵՏԵՐԱՍ—1930—ՑԵՐԵՎԱՆ



313

Թ. ՑՈՅԵԱՆ

631.51

ԷՐԶՐԱԿԱՆ ՄՇԱԿԵԼ ՀՈԴԵ,
ՎՈՐ ՇԱՏ ԲԵՐՔ ՏԱ.

A $\frac{1}{4110}$



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԳԻՑ - 1980

Հրատարակչ. № 1219.

Գրառեպ. № 3093 (բ) Պատվեր № 250 Տիրաժ 5000
Պետհրատի Յեղվարդ Տպարան Յեղևանում.

ԻՆՉՊԵՍ ՄՇԱԿԵԼ ՀՈՂԸ, ՎՈՐ ԼԱՎ ԲԵՐՔ ՏԱ

Հայանի լե, վոր հողն իր մեջ ունի բուլսի
համար բոլոր անհրաժեշտ և ոգտակար սննդա-
նյութերը։ Սակայն նյութերը հողի մեջ գտնվում
են այնպիսի վիճակում, վոր բուլսը նրանց կամ
չի կարողանում կամ դժվարությամբ ե ընդու-
նում և յուրացնում։ Հողը պետք է այնպես մը-
շակել և բույսի համար անհրաժեշտ սննդարար
նյութերն այնպիսի դրության մեջ դնել, վոր-
պեսզի բույսը հնարավորություն ունենա այդ
սննդանյութերը հեշտությամբ յուրացնել։ Բացի
այդ հողագործը հողը պիտի այնպես մշակի, վոր-
պեսզի հողն իր այդ համակությունները չկորցնի,
ու իր կնձկալին կտպմությունը պահպանի։

Հողագործության վեր աշխատանքն ե, վոր
նպաստում և հողի արդարիսի դրության պահպա-
նության ու ստանալուն։

Այդ՝ հողի մշակությունն ե, գլխավորապես
ցելը, վորով պահպանվում և հողի կնձկային կազ-
մությունը և նպաստում և նրա բերքատվության
բարձրացմանը։

Ա Ե Վ Ց Ե Լ

Մե ցել ե կոչվում այն ցելը, յերբ հողը վարում ենք աշնանից և ամբողջ ձմեռը, գարունն ու ամառը, մինչև ցանելը, այն մշտակում ենք լեռեսից և աշխատում հողը պահել փխրուն վիճակում և մոլախոտերից ազատ:

Մեր պայմաններում յերբ արտերը գոմաղբով պարարտացնելու հնարավորություն չկա, պետք ե աշնան ցորենին հաջորդող բույսի բերքը հավաքելուց անմիջապես հետո արտը վարել բազմախոփանի գութանով՝ $1\frac{1}{2}$ —2 վերշոկ խորությամբ։ Այս ձեի վարն ունի այն նշանակությունը, վոր մոլախոտի, խոզանի կամ նախորդը բույսի մնացորդները շատ խորը չընկնելով հողի մեջ՝ արագ են փտում։

Հետո յերկրորդ անգամ 3—4 վերշոկ խորությամբ վարում են աշնանը և այդպես առանց փոցխելու թողնում ամբողջ ձմեռ։ Ցելե հնարավորություն չկա յերկու անգամ վարելու, արդդեպքում պահանջած խորությամբ վարում են միայն աշնանը և առանց փոցխելու թողնում մինչև գարուն։

Գարնանը, հողը չորանալուց հետո, տեղը փոցխում են, ապա յերկխոփանի գութանով կամ արորով միջանի անգամ կրկնավար անում։

Այս բոլոր աշխատանքները կատարում են

այնպիսը ժամանակ և այնպես, վոր հողը մոլա-
խոտերից ազատ լինի և, ըստ հնարավորության,
մշտապես պահպանի իր մակերեսի փխրունու-
թյունը: Դրա համար, նաևած յեղանակին, հողի
հատկությանը, նրա վրա աճած մոլախոտերի
դրությանը, պիտի ցելը կամ փոցխել կամ վա-
րել լերկխոփանի գութանով ու արոքով: Այս բո-
լորը կախված կլինի նրանից, թե վորքան ա-
մուր և հողը, և թե վորքան հաճախ նրա վրա
յերեան են դալիս մոլախոտեր: Գլխավոր պատ-
մանն այն է, վոր հողի վերի շերտը միշտ փըխ-
րուն վիճակում լինի:

Հաճախ հողագործը հնարավորություն չի
ունենում աշնան ցանքի համար իր հողը աշնա-
նից վարել: Այդ գեղքում նա այդ աշխատանքը
ողիտի անի վազ գարնանը, հենց վոր ձլունը կը-
հալի և հողը կչորանա:

ԴԵՐՆԵՆ ՎԱՂ ՅԵԼ

Վաղ ցել կոչվում է այն ցելը, վորն ար-
գում և վաղ գարնանը՝ առլիին, յերբ հողը վա-
րում ու պատրաստում են աշնան ցանքսի հա-
մար: Այդպիսի ցելը կոչվում է նաև ապրիլյան
ցել: Կա նաև մայիսյան ու հունիսյան ցել:

Ի՞նչ առավելություններ ունի դարնան վաղ

ցելը տարվա մյուս լեղանակներին արած ցելերի նկատմամբ:

Գարնան վաղ կամ ապրիլան ցելը այն առավելութիւններն ունի, վոր արտը, սինչև աշնան ցանքսը, լերկար ժամանակ ե մնում վարած։ Այդ ժամանակամիջոցում հողի մեջ գտնըլված բույսի մնացորդները, ինչպես նաև գոմաղը (յեթե հողը պարարտացված ե գոմաղըով), յերկար ժամանակ մնալով հողի մեջ, լավ են փուլում։ Իսկ յեթե վարի և ցանքսի միջև լեղած ժամանակը կարճ ե, ապա ալդ հողը ցանքս անելու համար պատրաստ չեւ։

Բացի այդ զանազան մոլախոտերի սերմերն ել միաժամանակ չեն ծլում ու աճում։ Նրանք չափազանց շատ են ու բազմատեսակ։ Յերբ վարի ու ցանքսի միջև լեղած ժամանակը կարճ ելինում, այդ մոլախոտերից շատերը չեն ծլում, մնում են հողի մեջ և սկսում են ծլել ու աճել ցանված կուլտուրական բույսերի հետ։ Դրա համար ել մայիսին կամ հունիսին արած ցելի ցանքերը մոլախոտերով առատ են լինում։ Բացի ալդ, մոլախոտերի սերմերն ընկնելով մշակված հողի մեջ աճում են առատորեն, հողից լայն մեծքանակությամբ սնունդ և արգելք հանդիսանում կուլտուրական բույսերի բնական աճման։

Վաղ ցելի ժամանակն, ընդհակառակը, հնա-

բավորություն կա, մինչև ցանքը, կովել մոլախոտերի գեմ, նրանց քաղանել զանազան փոցխերով, բըիչներով։ Բացի այդ, յեթե արտում մինչև ցանքը մոլախոտեր են մնացած լինում, յեթե ցանված կուլտուրական բույսերի հետ են աճում, նրանք բավականին ջուր են կլանում գոլորշիացնում։ Մեր յերկրում, վոր առանց այն ել արեստ և չոր յերկիր եւ քամիներով առատ, ահա կիսմարական այս պալմաններն ել իրենց հերթին ավելի յեն նպաստում մեր հողերից շատ ջուր գոլորշիացնալուն։ Իսկ մենք գիտենք, թե ջուրը վորքան մեծ նշանակություն ունի կուլտուրական բույսերի համար։

Հետազոտությունը ցույց է տվել, վոր մոլախոտերը մի հեկտար հողից գոլորշիացնում հն քառասուն հազար տակառ ջուր։

Այսօն, մի արտում վորքան մոլախոտեր պետք է լինեն, վորողեսզի այդ քանակությամբ ջուր կլանեն, իսկ հողից խլին սնունդը։

Մի գյուղատնտես հաշվել ե, վոր Մոսկվայի նահանգի ամբողջ Վոլոկոլամսկ գավառի գյուղացիների արտերում շմաքրքած սերմի հետ մենք տարի ցանվում ե 6000 ցենտներ (36.000 փութ) մոլախոտերի սերմ, կամ յուրաքանչյուր հեկտարին 12 կիլոգրամմ։ Իսկ վորքան սերմ ե

ընկնում ցանքի մեջ արտերի և նրանց միջնակ-
ների վրա բուսած մոլախոտերից:

Դրա համար գարնան վաղ ցելը հողի մա-
կերեսալին մշակության հետ միաժամանակ հողը
պահպանում և վոչ միայն նրա մեջ գտնված ջրա-
լին պաշարի գոլորշիացումից, այլև նրան աղա-
տում և մոլախոտերից, վորոնք, ինչպես առա-
ցինք, հողից խում են մեծ քանակությամբ ջուր
և սնունդ և իջեցնում են հողի բնըքատվությունը:

Փորձադաշտերում տարվա զանազան յեղա-
նակներում ցելերի վրա կատարված ցանքերը
տվել են հետեւյալ արդյունքները:

Աշնան վարը, ապա նույն արտի և դորնան
կրկնավարը և հետագա խնամված ցելը մի հեկ-
տարին տվել են $18 \frac{1}{2}$ ցենտներ ցորեն։ Գար-
նան վաղ ցելը — ապրիլյան ցելը տվել են 18 ցենտ-
ներ, իսկ հունիսին արած ցելը՝ ընդամենը 12
ցենտներ։

Այս թվերը ցույց են տալիս, թե բերքա-
տվության բարձրացման տեսակետից վորպիսի
խոշոր նշանակություն ունի գարնան վաղ ցելը։

Յ Ա Ն Ա Ծ Յ Ե Լ

Ցերք հողը վարած և մշակված և աշնանից,
ինչ կատկած, վոր միանդաման ձեռնառու չե ալդ
հողը մինչև աշնան ցանքու թողնել առանց ոգ-

տագործելու։ Այդ դեպքում շատ հաճախ այդպիսի
հողում ցանում են միամյա այնպիսի բույս, վոր
կարելի լինի մինչև աշնան ցանքը քաղել։

Այդպիսի ցելում մեր պայմաններում կա-
րելի յե ցանել վիկ, մաշ, վաղահառ շարքահերկ
բույսեր։

Այդպիսի ցելը կոչվում ե ցանած ցել։

Դրա համար աշնանը վարած հողը գարնա-
նը շատ շուտ, հենց վոր հողը չորանում ե, կըր-
կին վարում են յերկխոփանի գութանով, փոց-
խում են և վիկ կամ մաշ ցանում։

Վիկը կամ մաշը մինչև մայիսի 1-ը պիտի
ցանված լինի, վորակեսղի կտրելի լինի հնձել հու-
նիսի վերջերին։ Եերքը հավաքելուց հետո ար-
տը վարում են 1 $\frac{1}{2}$ —2 վերշոկ խորությունը
ու փոցխում, վորակեսղի վիկի կամ մաշի արմատ-
ները և այլ մնացորդները լավ փառն։ Հետո աշ-
նան ցանքից յերկու լերեք շաբաթ առաջ հողը
կը կին վարում են 3—4 վերշոկ խորությամբ,
առաջ փոցխում, վորից հետո նա աբուն ցանքի
համար պատրաստ է։

Էնիմականի փորձադաշտը, վոր միքանի տա-
րի լի, ինչ փորձեր ե անում գանազան ցելերի
վրա, հետեւալ արգլունքն ե տալիս։

Գարնան վաղ ցելը հերկվել ե ապրիլի 17-ին։
Ամառվա ընթացքում չորս խոփանի գութանով

յերկու անգամ յերեսանց վարված ե՞ կեղևատաման և մոլախոտերը վոչնչացնելու համար:

Կարտոֆիլի ցելը հերկվել ե ապրիլի 20-ին, զիգզագ փոցխով մեկ անգամ փոցխելուց հետո ապրիլի 27-ին տնկվել ե Իմիրխան գլուղի «կարճաքլոք» վաղահաս կարտոֆիլ։ Մեկ անգամ թոխիներով փխրեցրել են, մեկ անգամ բուկը տվել և մեկ անգամ ել ջրել, Կարտոֆիլը հավաքել են հուլիսի 30-ին։

Վիկի ցելը հերկվել ե ապրիլի 20-ին, մեկ յերես փոցխելուց հետո ապրիլի 24-ին ցանել են վիկը։ Միլերը յերեացել են մայիսի 12 ին, ծաղկել ե հուլիսի 28-ին և քաղվել հուլիսի 30-ին։

Հուլիսան ցելը հերկվել ե մոտ յերկուսուկես ամիս ավելի ուշ, քանի առաջին յերկու ցելը։ Այդ հողամասի վրա մինչև հուլիսի 12-ը վոչ մի աշխատանք չի տարվել։ Ցնացել ե անխնամ, ինչպես գյուղացիք են թողնում։ Միայն հուլիսի 12-ին խոտը քաղել են և հուլիսի 30-ին վարել։

Աշնան ցանքսը բոլոր հողերի վրա կատարվել ե միևնույն որը՝ սեպտեմբեր ամսին։

Ի՞նչ արդյունք ենք ստացել այդ ցելերից։

Գարնան վաղ ցելի մի հեկտարից ստացվել ե 22,5 ցենտներ։


Էաբստոֆիլի ցելի մի հեկտարից—21,5 ցենտ-
ներ:

Վիկի ցելի մեկ հեկտարից—17,5 ցենտներ:
Իսկ հուլիսյան ցելի մեկ հեկտարից—16,3
ցենտներ:

Գարնան վաղ ցելը, համեմատած հուլիսյան
ցելի հետ, մի հեկտարին տվել ե 6,2 ցենտներ
ավելի, իսկ ցանած ցելերը՝ առաջինը 5,2
ցենտներ, իսկ յերկրորդը 1,2 ցենտներ ավելի:

Այս թվերն ապացուցում են, թե վորքան մեծ
նշանակություն ունեն ցելերը, նաև ավանդ
գարնան վաղ ցելը:

A 1/10





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038870

[024]

A-I
4110

ԳՐԱՅԻ Յ ԿԱՊ. Մ. (1/9, մամբուլ)



Տ. Տեղին

Какая нужна обработка земли для
получения большего урожая

Госиздат ССР Армении
Эривань - 1930